

Հ
Օ
Տ

Աղբրեջանական ստորաբաժանումները Օգոստոս 18-ին յարձակումներու ձեռնարկած են Մարտակերտի Մեծչէն եւ Մարտունիի ճարտար դիւղերուն վրայ ու ետ մղուած են: Երեք հայ երիտասարդներ զոհուած են, թշնամին ունեցած է տասը հոգիի կորուստ: Գիշերը ոմրակոծուած են Հաղբութի դրեթէ բոլոր սահմանամերձ դիւղերը:

**

Օգոստոս 19-ին կացութիւնը շատ սուր բնոյթ առած է Գորիսի, Կապանի, Կրասնոսելսկի սահմաններուն վրայ: Զանգեւանի, Կուսպիթլի եւ Գետաբէկի ռազմական յաններէն դէնքի դրեթէ բոլոր տեսակներով ուժղին կրակ բացուած է հայկական սահմանամերձ շրջաններու եւ պաշտարանական դիրքերու վրայ:

Առաւօտուն մարտական դործողութիւններ ծաւալած են Գորիսի Կռոնիձոր դիւղին սահմանին վրայ: Երեկոյեան կրակը տեղափոխուած է նաեւ Շուռնուխ եւ Խնձորեակ: Ռմբակոծուած է Գորիսը ուր ըստ նախնական տուեալներու, խաղաղ բնակչութենէն հինգ մեռեալ եւ հինգ վիրաւոր կայ: Կրակի տակ մնացած են Կապանի Դաւթբէկ, Եղվարդ, Ուժանիս եւ Կաղնուտ դիւղերը, քաղաքին կեդրոնը: Կրասնոսելսկի մէջ թշնամին կրակը կեդրոնացուցած է յատկապէս Վերին եւ Ներքին ճամբարակ դիւղերուն ուղղութեամբ:

Իսկ Իջեւանի Բերքաբեր դիւղին սահմանային հատուածին վրայ խախտելով դիւղատնտեսական աշխատանքները չխանդարելու երկկողմանի համաձայնութիւնը, Աղբրեջանցիները կրակ բացած են սահմանամերձ տարածքին մէջ խոտհունձքի ելած մշակներու վրայ: Հայ մարտիկները դանձոք դուրս բերած են կրակի դուռիէն: Մէկ հոգի վիրաւորուած է:

Արցախի կառավարութեան գլուխն անցած է Բորիս Առուշանեան, որ կը յաջորդէ հրաժարեալ Օլէգ Եսայեանի: Վարչապետին Ա. տեղակալն է Ժիրայր Պօղոսեան, առժամապէս:

**

ԶՕՐԱԿՈԶԸ ԶԱԽՈՂԱԾ

Օգոստոս 18-ին կառավարութեան խորհրդակցութեան ընթացքին քննարկուած է զօրակոչի ընթացքը: Նշուած է որ կազմակերպչական թերիներու հետեւանքով զօրակոչը ձախողած է, թերացած են տեղական իշխանութիւնները: Շրջանային եւ քաղաքային խորհուրդներու գործադիր կոմիտէներուն յանձնարարուած է միջոցներու ձեռնարկել խուսափողներու հարցերով զբաղող յանձնախումբեր ըստ տեղծելու համար:

**

Սեպտեմբերէն տկսեալ ծխախոտն ու շաքարը կը վաճառուին կտրօններով: Յետագային կը մեծնայ կտրօնով տրուող ապրանքներու թիւը: Այս մասին յայտարարած է վարչապետ Ս. Յարութիւնեան:

**